ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

8 –րդ դասարան

Առաջադրանքի №	*Ճիշտ պատասխանը*
1	4
2	2
3	1
4	3
5	4
6	2
7	1
8	4
9	Երեմիա
10	Ազգային եկեղեցական
11	օգոստոսի 15-ի
12	Արտազի
13	1 ե 2 բ 3 դ 4 ա
14	1 ե 2 ա 3 դ 4 բ

Առաջադրանքի №	*Ճիշտ պատասխանը*
15	1 ե 2 ա 3 դ 4 բ 5 գ
16	1 դ 2 բ 3 գ 4 ա 5 ե
17	Առաքել Դավրիժեցի Մովսես Գ Տաթևացի
18	3 4
19	2 4

20-րդ և 21-րդ առաջադրանքների գնահատման չափանիշները տե՛ս հաջորդիվ (էջ 1-3):

20-ՐԴ ԵՎ 21-ՐԴ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐԻ՝ ՇԱՐԱԴՐԱՆՔ ՊԱՀԱՆՋՈՂ ԱՌԱՋԱԴՐԱՆՔԻ ՊԱՏԱՍԽԱՆԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

2 միավոր

- Պատասխանը ցույց է տալիս, որ սովորողը հասկանում է թեմայի բովանդակությունը, հարցերը և հիմնախնդիրները: Պատասխանը լիարժեք է և ամբողջությամբ համապատասխանում է ուսումնական թեմային (նյութին), ճշգրիտ է և ամբողջական (ընդգրկում է բոլոր հիմնական պատմական փաստերը, երևույթները և գործընթացները): Պատասխանում ակնառու երևում է ինտեգրված գիտելիքը և զարգացած մտածողության կարողություններն ու հմտությունները: Այդ գիտելիքի կիրառումը ցույց է տալիս, որ.
- սովորողն ունի զարգացած գրավոր խոսք և կարողանում է գրագետ շարադրել սեփական մտքերը,
- հասկացությունները շարադրված են ճշգրիտ և բերված են համոզիչ փաստարկներ,
- հասկացությունները ճիշտ են մեկնաբանված,
- տարբեր աղբյուրներից ունեցած գիտելիքները համադրվել են՝ կոնկրետ խնդիրների լուծումներ գտնելու համար, առաջադրվել է դասակարգման ինքնուրույն ձև,
- բացահայտված են պատմական փաստերի, երևույթների և գործընթացների միջև եղած բոլոր պատճառահետևանքային կապերը,
- պնդումները հիմնավորված ու փաստարկված են մի շարք ապացույցների միջոցով,
- կատարվել են համարժեք և հիմնավոր եզրահանգումներ:

1,5 միավոր

- Պատասխանը ցույց է տալիս, որ սովորողը հիմնականում հասկանում է թեմայի բովանդակությունը, հարցերը և հիմնախնդիրները: Պատասխանը ունի աննշան թերություններ, ճշգրիտ է, ամբողջությամբ համապատասխանում է ուսումնական թեմային, բացակայում են մի քանի ոչ էական պատմական փաստեր: Պատասխանում ակնառու երևում է ինտեգրված գիտելիքը և զարգացած մտածողության կարողություններն ու հմտությունները: Այդ գիտելիքի կիրառումը մատնանշում է, որ
- հասկացությունները ճշգրիտ են շարադրված և բերված են հավասարակշռված փաստարկներ,
- կան հասկացությունների ոչ էական սխալ մեկնաբանություններ,
- տարբեր աղբյուրներից ունեցած գիտելիքները համադրվել են կոնկրետ խնդիրների լուծումներ գտնելու համար,

- հիմնականում բացահայտված են պատմական փաստերի, երևույթների և գործընթացների միջև եղած բոլոր պատճառահետևանքային կապերը,
- պնդումները հիմնավորված ու փաստարկված են,
- ճիշտ է ընկալվել պատմական փաստերի, հասկացությունների, երևույթների իմաստն ու էությունը:

1 միավոր

- Պատասխանը ցույց է տալիս, որ սովորողը հիմնականում հասկացել է թեմայի բովանդակությունը, հարցերը և հիմնախնդիրները: Պատասխանն ունի թերություններ, սակայն գրեթե ամբողջությամբ համապատասխանում է ուսումնական թեմային (բացակայում են որոշ էական պատմական փաստեր, երևույթներ և գործընթացներ): Պատասխանում երևում է յուրացված գիտելիքը և դրա կիրառման արդյունքում զարգացած մտածողության որոշակի կարողությունների և հմտությունների զարգացումը: Այդ կիրառումը մատնանշում է որ.
- հասկացությունները ճշգրիտ են շարադրված և բերված են հավասարակշռված փաստարկներ,
- կան որոշ հասկացությունների էական սխալ մեկնաբանություններ,
- բացահայտված են պատմական փաստերի, երևույթների և գործընթացների միջև եղած որոշ պատճառահետևանքային կապեր,
- պնդումների մի մասն է միայն հիմնավորված ու փաստարկված ապացույցների միջոցով,
- հիմնականում ընկալվել է պատմական փաստերի, հասկացությունների, երևույթների իմաստն ու էությունը,
- կատարվել են որոշ եզրահանգումներ:

0,5 միավոր

- Պատասխանում նշվում են որոշ պատմական փաստեր, տրվում՝ որոշ երևույթների նկարագրությունը: Պատասխանն առնչվում է ստուգվող գիտելիքին կամ հիմնահարցին, բայց բացակայում են բավարար շարադրանքը և գիտելիքների կիրառման հմտությունները: Շարադրանքում առկա են.
- հասկացությունների ոչ ճիշտ մեկնաբանություններ,
- մեծ քանակությամբ փաստական սխալներ, խոսքը կապակցված չէ, մեկնաբանությունները հիմնավորված չեն,
- պատասխանը մասամբ է համապատասխանում ստուգվող ուսումնական նյութի բովանդակությանը, կան լուրջ շեղումներ ու բացթողումներ,
- բացակայում են համապատասխան եզրահանգումներ:

0 միավոր

- Պատասխանը ամբողջությամբ սխալ է կամ էլ առնչություն չունի ստուգվող ուսումնական նյութի բովանդակության և հիմնախնդիրների լուծման հետ: Կամ էլ ընդհանրապես բացակայում է պատասխանը: